

(3 Օգ. 1915, թ. 128): Յետոյ շատ աւելի մեծ թուեր պիտի տեսնենք արձանագրուած: Այս տեղ բաւական ըլլայ Տիսկա (v. Tyszka) թղթակցին իրաւացի դիտողութիւնքս. թէ՛ «Եթէ թուրքերը ռուսական սահմանին երկայնքը տողուած Հայոց չէին վատահիր, ինչու ռուսական սահմանին վրայ բնակողներուն եղածին պէս նոյն անգութ խտուրթեամբ քշեցին Եալովայէ, Անկիւրիայէ, Բրուսայէ, Աստամունիէ: Այս տեղերէն միայն 250.000 Հայեր աքսորուած են: 48 ժամու մէջ իրենց բնակութիւնները ստիպուած էին թողուլ եւ աքսորք երթալ դէպ ի Հալէպ, Զոր, Համա, Մոսուլ, նոյն իսկ Հաւրան: Թուրք կառավարութեան կողմէ բան մ'եղած չէր՝ աքսորեալքն իրենց տարագրւալը տանելու: Երգեկաւորի գնացքները ղինուորաց փոխադրութեամբ բռնուած էին: Հոն հայ մը տեղ չգտաւ: Ճամբաներու ապահովութեան որեւէ խնամք տարուած չէր: Չէինները, 1877/8ի պատերազմին հին պաշտօնները նորէն մէջտեղն էին, ուր անջան աւար կար ընելիք եւ կոտորած, առանց անձամբ վտանգի մ'ենթարկուելու: Որչափ քաջ է թուրք ղինուորը եւ մարդկորէն ալ զգայ, երբ կրօնական մոլեռանդութիւնը չէ զրգուում, նոյնչափ վատ եւ վայրագ է Անկա-նոնը: Թէ երիտասարդ թուրքերը դրդած են չէ-թէներն եւ անոնց առաջնորդած՝ յաճախ կը հաս-տատուի: Այս տեղերն, ուր հայ ժողովրդեան կո-տորածներ տեղի ունեցած են, ինչպէս ի Բաբերդ, Մարաշ, Հապին-Գարահիսար, Անկիւրիա, Մալա-թիա, այրերը բաժնած են կանանցմէ: Ինչ որ կա-նայք աճապարանօք կրնային հաւաքել՝ հետերնին առած են: Չէինները ինչպէս ինչպէս անգլիներն է-րաններն, ինչպէս ինչպէս բանահայտ էր: Թուրք հազարապետ մը (Oberstleutnant «գնդապետ ետեղակալ») որ ի Տարտանէլ կուած էր եւ կարճ արձակուրդով մայրաքաղաքս եկած էր, լալով պատմեց ինձի՝ ինչ որ իւր ազգականք Տրապի-զոնէ ու Սեբաստիայէ գրած էին Հայոց դէմ թրքական կոտորածներու մասին» են (30 Սեպտ., թ. 176):

(Շարունակելի)

Հ. Յ. Տ.



ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

tam-dam (ԳԵՂԱՓԵՐԵՅԻՐ ՀԱՄԻՆ՝ «ԵՄՈՒՍԻՆ»,) ԲԼՈՒԹ ՅԵՐԵԹԵԿԱՆ ԺԱՅՈՒՄԸ*

Ա.

Մարդասիրական ոգւով լեցուն Հաստա-տութեան անդամներից մէկը շնորհալի համեստ կերպով խնդրեց ինձանից մի յօդուած՝ «Հանդէս Ամսօրեայի», համար: Այն բոլորէն երբ իմ առաջ նոր է բացուում Արեւելք եւ Արեւմուտք, այսինքն հին, նախապատմական շրջանի Արեւելք եւ Արեւմուտք կուտուրապէս միացնող զմայլե-ցուցիչ պատկերը յարեթագիտական ուսման վրայ յենուած, իսկ այդ պատկերը պարզելու գործում հայերէն լեզուն բաժին է ընկնում իսկապէս առաջնակարգ դեր խաղալ — արդեօք ինչո՞ւ մասին կամ որ մասից ընդունակ իմ ես ինքս, այլ եւ վայել է հայ լեզուով տպուող հայագիտութեան նուիրեալ ամսաթերթի հա-մար գրել, եթէ ոչ յարեթական լեզուագի-տութիւնից: Դժբախտաբար առկնների ձկան պէս՝ «ասելու շատ բան ունիմ, բայց բերանս լիքն է ջրով», ինձ վրայ պարտք է դրուում նոր բաններից զրուցել, երբ հին, արդէն ինձ համար վաղուց նորութեան համը կորցրած, սակայն կարեւոր յարեթագիտական գիտելիքներից հե-տաբերուող ընթերցողներին յայտնի չէ եւ ոչ ինչ: Չնայելով որ Արեւմտեան Եւրոպայի գի-տական աշխարհը մեծ աշխոյժով է նոր նոր հարցերով զբաղուում, եւ ստիպուած էլ է զբաղուելու նոր հողի տակից ելած, անընդ-հատ ելնող հարուստ նիւթերով (բաւական է յիշել քետեան լեզուով՝ ուղիղ ասած՝ Փոքր Ասիայի մի խումբ լեզուներով գրուած բեւե-րագիր յիշատակարանների անչափ պաշարքը), տեսական մասում նշմարուում է լեզուագի-տութեան մէջ ինչ որ «քարացում», մեռելու-թեան տիրապետում: Ոչ միայն հին դասական

* Պետրոգրադի Համալսարանի հայերէնագէտ Ուսուցչապետին՝ Պրոֆ. Ն. Մանի զրէն է յօդուածս, որ նորութեանի եւ Բասկերէնի աղերսն Կովկասեան լեզուներու յատկապէս հայերէնի հետ ուսումնասիրելու համար ուղեւորելով վերին իտալիա եւ Պիւրնիման թե-րակուն, 1920 Դեկտ. հիւր եղաւ մեզի պատուելով իւր ներկայութեամբ խմբագրութիւնս: Առանձինս ինդրա-նօք զրեց հետեւեալ յօդուածք հայերէն, որ կը բա-ցատրէ համառօտիւ իւր նոր դրութիւնս հարեթական լեզուախմբի մասին, որ կոչուած է յեղաշրջել լեզուա-բանական ծանօթ դրութիւնները, բոլորովին նոր ուղ-ղութեամբ: Խմբագրութիւնս «Համալսարան»:

մեռած լեզուների վերաբերմամբ, այլ եւ երբ նոր երեւցող՝ առեղծուած դարձած կենդանի լեզուի, բասկերէնի վրայ է հարց լինում, յարգելի գիտնականներ հետազոտելի առարկայի շուրջ անմատչելի պատեր են կառուցանում իբրեւ թէ ի պաշտպանութիւն գիտական եղանակների:

Յայտնի բասկագէտ պ. Vinson յամառութեամբ կրկնում է ի սկզբանէ անտի մինչեւ այսօր, որ բասկերէնը ոչ մի լեզուի հետ ազգակցութիւն չունի, չէ էլ կարող ունենալ. իսկ բասկերէն խօսող ազգաբնակութեան սահմանները միշտ այն էին եւ նոյն տեղը, որ տեղ մենք այժմ նոցա գտնում ենք՝ դուցէ չնչին բացառութեամբ: Ուրիշ բանասէր մը՝ պ. Bourgois խիստ եւ իբրեւ թէ ոչնցացնող արշաւանք է ձեռնարկում ընդդէմ Խ. Winklerի ուսումնասիրութեան, ընդդէմ նրա գրած Das Baskische und der vorderasiatisch-mitteländische Völker- und Kulturkreis (Breslau 1909)¹, ընդդէմ այն կարծիքի թէ բասկերէնի հետ կապ ունին «իսկանսեան», [յարեթական] լեզուներ:

Գուցէ պ. Bourgois եւ իրաւունք ունի, երբ Խ. Winklerի գրութեան մէջ չի գտնում մինչեւ անգամ վրացագիտութեան բաւական հմտութիւն, սակայն իրան, պ. Bourgoisի արած նկատողութիւններից պարզ տեսնուում է, որ վրացերենում ինքն էլ շատ բոբիկ է, չգիտէ այնպիսի տարրական բան, ինչպէս տրական -man վերջաւորութեան պատմութիւնը եւ առ հասարակ անցեալի (aorist) կրաւորական կազմութիւնը:

Ի հարկէ գործը միայն վրացերէնագիտութեամբ եւ կամ հայերէնագիտութեամբ չէ կարող ի գրութիւն ելնել. եւ ոչ էլ առ հասարակ ուրիշ կաւկասեան-յարեթական լեզուների լոկ բանասիրական հմտութիւն ունենալով, չարկաւոր է գոնեա սկզբնական դաղափար ունենալ յարեթագիտական տեսութեան մասին եւ քիչ թէ շատ տեղեկութիւն յարեթական համեմատական քերականութիւնից, որպէս զի այսպիսի հարցերի վրայ մի քիչ խելքի մօտ բաներ զրուցել կարելի լինի եւ մարդ յաւակնութիւն չունենայ լոկ վճիռներով եւ ընդհանուր մտածմունքներով ջրելու այն ինչ որ նիւթերով եւ փաստերով դուրս է ամեն կասկածից՝ օրինակ՝ բասկերէնի ցեղովին յարեթական ծագումը,

հետեւապէս եւ վրացերէնի եւ մասամբ — որքան նրա յարեթական շերտին է վերաբերում — եւ հայերէնի հետ նորա ազգակցութիւնները¹:

Բայց ինչ է պատճառն, որ այս անկասկած գիտական դրութիւնն ոչ միայն անընդունելի, այլ եւ անհեթեթ է երեւում: Ի հարկէ ոչ պարզ լինողներ, Bourgoisներ եւ ուրիշ բարեխիղճ գիտնականներ են մեղաւոր, երբ նրանք բասկերէնի, վրացերէնի եւ հայերէնի մինչեւ անգամ կղզիացումն են դաւանում եւ պաշտպանում: Պատճառն հասարակական՝ տիրող կարծիքն է, որ բնաւ չհետաքրքրուելով էապէս փոքր ազգերի գոյութեամբ կամ չգոյութեամբ՝ չէ կարող առաջ բերել նաեւ ստեղծագործ գիտնական միջավայր, ուր նոցա յարաբերութեանց ծանրակշիռ հարցը լիովին ուշադրութեան եւ իրապէս խորաթափանց ուսումնասիրութեան արժանանայ: Եւ մենք՝ կովկասեան յարեթագեաններս ունինք արդեօք իրաւունք եւրոպական ազգերի հասարակական կարծիքից սպասել այնպիսի քաջագործութիւններ, մանաւանդ խօսք լինելով այնպիսի միմեանցից հեռու ընկնող լեզուների ազգակցութեան մասին, ինչպէս են Պիւրենեան Թերակղզու եւ կովկասի յարեթազնների լեզուները, երբ նոյն կովկասում հասարակական կարծիքը միայն այսօր՝ օրհասական ժամերին՝ սկսում է զգալ, եթէ ոչ հասկանալ, անխղճի կապերով եղբայրակցած յարեթական երկու կուլտուրական ազգերի միութեան կարեւորութիւնը. ինչ զարմանք, եթէ նոյն ազգերի ցեղապատմական միութեան, իրականութիւնը երեսուն տարի անժխտելի ապացոյցներով բացայայտ էր դնում յարեթագէտը, բայց չկարողացաւ եւ ոչ մի վայրկեան գործը դուրս բերել այն սահմաններից, որտեղ գիտական կարծիքն լսուում էր իբրեւ ձայն բարբառոյ յանապատի: Իսկ մի եւ նոյն ժամանակ գիտական կարծիքը, իրան յարեթագէտ թուիչներով եւ նոր ուսումնասիրող նիւթերով մղուած կովկասի յարեթագեանների ցեղակիցները հասցնում է մինչեւ Բասկաստան, որ Սպանիայի եւ Գաղղիայի մէջն է՝ երկու մասի բաժանուած²:

¹ Н. Март, О афетическом происхождении баскского языка (— Прилож. к прот. VIII Засед. Отд. Ист. Наук и Филол. Р. Академии Наук, 28 апреля 1920), էջ 75—86.

² Նոր հայեցումներ հեղինակին յարեթական ընտանիքի տարածման մասին ահա նորա Լայպցիգում ապրած (1920) ուսանելի յօդուածը՝ Афетический Кавказ и третий этнический элемент в созидании средиземноморской культуры.

¹ Գոթախոսաբար ինչ չի յաջողուում մինչեւ այս րոպէս գիրքս ձարել (բոլորովին սպառել է):

Ի հարկէ այդ ցեղակցութիւնն առանց յաբեթական լեզուների համեմատական քերականութեան, համեմատական հնչիւնաբանութեան չի էլ հասկացուի: Օրինակ, ինչպէս կարելի է հաւատալ առանց ունենալու տրամադրութեան տակ համապատասխան օրէնք, որ *hayk* հայի եւ *bask* բասկի մի եւ նոյն բառն է, նոյնպէս *a-bask* (*Ἀβασκος*, միջնադ. *Ἀβασκος*, վրաց. *a-ḡaḡ* «գիւղ»), այլ եւ *mesq* մէսի եւն, կամ թէ *հ. dur* ճուր, բսկ. *r-dur-i* (*r-duri*) «դուրի» եւ վրց. *ikāl* ճուր նոյնպէս մի եւ նոյն բառի զանազանումներն են, ինչպէս եւ *հ. e-ḡan* (սեռ. *e-ḡi-n*) եւ բսկ. *e-dī* եւն: Երբ, ընդհակառակ, հայերէնում, վրացերէնում եւ բասկերէնում գրեթէ առանց փոփոխութեան կամ չնչին զանազանութեամբ են երեւում խօսքեր, օրինակ, *հ. gari* գարի (վր. *ger-i*), բսկ. *gari* ցարի եւն. բսկ. *gau* գէւր, resp. *gav-||gab-* (հմմտ. լաբուրդէնի մէկ բարբառում — *gab-aḡ*), փոխանակ **ḡab*, **ḡam* (քանի որ բասկեր կորցրել են «աֆրիկատ» հնչիւն *ḡ*) եւ վրց. *ḡam-e* գէւր, *հ. tegi* տէլ եւ բսկ. *tegi* (*-telē*) տէլ, *հ. ḡar* ար եւ բսկ. *«tzar»* «char» ար, *հ. geyut*, *>geu* (*<gēu||garu*) քար եւ բսկ. *garz-to* քար, այդպիսի օրինակներ ոչ զանազան լեզուների ազդակցութեան ապացոյցներ են, այլ ճիշդ բասկերէնի մնացորդներ վրացերէնում եւ հայերէնում: Բայց այն է, որ հայկազեան հայերը՝ Հայկից սերունդով, նոյն բասկերն («հայկ-»-եր) էին, իսկ վրացիների հետ, ինչպէս յայտնի է, ձուլուեցան «մեսի»-երն, այս ինք նոյն բասկերը:

Առանց այս եւ սրա նման ուրիշ բարդ յարաբերութիւններ ի հաշիւ առնելու եւ հնչիւնաբանութեան պատմական-համեմատական օրէնքները ի նկատի ունենալու աշխատել չէ կարելի: Այս միջոցների շնորհիւ է մեզ, լոկ յաբեթագէտիս, տրուում հնարաւորութիւն բսկ. *neskatil* օրէնք եւ բսկ. *mutil* մուտի պատմական շաւիղով լուսաւորել, վերլուծելով իրրեւ բարդ բառեր *neska-til* եւ *mu-til*, որոնց *-til* «որդի» կը նշանակէր (հմմտ. *-er* «որդ», *հ. օրէնք* բառում¹), եւ մի շարք բնակից բառեր *til* (*||tur > tur*) *||til > til* եւն ունին ուրիշ յաբեթական լեզուների մէջ նոյն նշանակութիւնը: Ի հարկէ եւ բասկերէնի հնչիւնաբանական օրէնքները պիտի իմանանք, օրինակ *[k >]* *k > [h]* եւ «*h*» հնչիւնի ընկնում — անհետանալը որոշ դրութեան մէջ, որպէս զի բասկերէնի նախա-

ձեւը վերականգնելով **kmor-til > [h]mu[r]-til*, նրա ընկերը — վրացերէնի, երեւի՝ մեսիներէն շերտում տեսնել կենդանի *kmar-til* (ժողովրդ. *kma-til*) *> mar-til* մարի, մալ: Իական զանազանութիւն միայն այն է, որ բասկերէն ըստ իրեն «չ-խումբի բնակցութեան *h*» ի տեղ *h* «*h*» ձայնաւոր ունի, որ ինչպէս «չ-խումբում շրթայինի (*h* *m*)» կից՝ բասկերէնում էլ դարձել է *h* «*h*»: Իսկ ինչ են անում երեւելի բասկագէտներ: *Mutil* պարզ բառ մտածելով՝ լատ. *mut-ilus*ից են ծագեցնում կամ ուղեւորականից, իսկ *neskatil*ում, որ բաղկացել է երկու բառից, նոյնպէս պարզ ճանաչելով վերջի *-il* իրրեւ «*suffixe*» են ընդունում!

Յաբեթական լեզուագիտութիւնը կապեր է գտնում ոչ միայն հիմայ կովկասում ապրող ազգակից ցեղերի եւ հեռու տեղերի բնակիչների մէջ, այլ եւ հնդի ժամանակների սերունդների, մինչեւ անգամ Միջագետքում սեմական ցեղի առաջը ընկնող կուլտուրական ազգերի մէջ: Խօսքը մենակ շումերների կամ սումերների մասին չէ: Ասորեստանի սիլաբարները իրանց նիւթերով եւ բացատրութիւններով մեզ հիմունք են տալիս պարզելու, որ Միջագետքում շումերներից անկախ, եղել են ուրիշ նոյնպէս յաբեթական ազգեր, որոնց կուլտուրական յառաջդիմութիւնները ժառանգել են շումերները, որոնց լեզուի մէջ մնացել են անհետացած ցեղերի լեզուական նշմարներ: Եւ որպէս զի ներկայ յօդուածիս յատուկ առարկային անցնենք, հարկաւոր է թեթեւակի շօշափել երկու սկզբունքային տեսական հարցեր. մէկ — խառն՝ ուղիղ ասած՝ *hybride* լեզուների գոյութիւն. խառնուածի աստիճան, չափ, ուր որակութիւնը զանազան է լինում. լինում է խառնուածի տիպար զանազան լեզուական ընտանիքի, ինչպէս հայերէնը, որի մէջ ձուլուած է հնդեւրոպականը յաբեթականին հետ. բայց եւ ոչ մի զուտ յաբեթական լեզու նախնական պարզութիւն չէ ներկայացնում, բոլորը խառն տիպար է ներկայացնում զանազան ցեղական լեզուների՝ թէպէտ եւ մի յաբեթական ընտանիքի: Ես գիտեմ, որ ժամանակակից գիտութիւնը չէ ընդունում այսպիսի դրութիւն, բայց ես ինչ անեմ, որ փաստեր ինձ ստիպում են պնդել, որ առանց այս ձուլման հողի վրայ վերամշակման ոչ մի վայելուչ լեզու չէր կարող գոյանալ իրրեւ ընդունակ տեւողութեան եւ կուլտուրական զարգացման: Եւ առանձին եղանակ էլ կայ այս երեւոյթն բաց անե-

¹ Առաջին մասը՝ օրէնք նոյնպէս յաբեթական ծագում ունի. նա առանձին կը բացատրուի «*er*»-ի («*er*»-ի) իրական անունների վերջաւորութեան հետ:

լու՝ պալէօնտոլոգիական լեզուագիտութիւնը, ոչ բանասիրական-պատմական, այլ ցեղագիտական նախապատմականը: Այս ուսումնասիրական եղանակով մենք հասնում ենք նրան, որ ոչ միայն գտնում ենք, օրինակ, գրաբարի յոգնակի «բ» վերջաւորութեան յարեթական ծագումը, այլ եւ այն, որ նա լոկ յոգնականութեան ցուցիչ է եւ ոչ բնաւ յատուկ ուղղականի վերջաւորութիւնը. վերջին դերն արդէն ձուլման ժամանակ ազդող նոյն հայերէնի նոր ստեղծագործող հոգեբանութիւնն է առաջ բերել: Միւս կողմից, հարկաւոր է յարեթական լեզուների աւելի խորասուզող լեզուագիտական պալէօնտոլոգիայի հմուտ լինել, որպէս զի հետազոտութիւնն արդիւնաւէտ ճամբով առաջ տարուի: Եթէ մենք արդէն չգիտնայինք, որ յարեթական լեզուներով «եզն» ուղղակի «հոգի» («կենդանի» - շնչաւոր) նշանակում է, ի հարկէ կը դժուարանայինք իսկական տեղ գտնել հ. ցուլ բառի համար, որ յարեթական ծագում ունի: Հայերը պահել են «ս»-խումբի խօսք «եզ» իմաստի համար իրանց ցուլում, որ պատմական զարգացմամբ ներկայացնում է նշանների կողմից առաջին արմատականի բարձրացմամբ *sul-* (-*şul*) բառը, այս ինքն այն բառն, որ «ս»-խումբի մէկ լեզուում, վրացերէնում, մինչեւ այսօր պահել է իրան հնուց յատուկ նշանակութիւնը «հոգի»:

(Հարեթական)

Ն. ՄԱՌ



Түрк. جنجرجا = arm. ԳՆՃՂՈՒԿ

Schon vor mehreren Jahren habe ich in dieser Zeitschrift einen Aufsatz über einige armenische Lehnwörter im Türkischen veröffentlicht¹. Die folgenden Zeilen behandeln abermals einen armenischen Fremdling im Türkischen, den ich aber im Vergleiche zu den von mir bereits festgestellten im Wortschatze eines viel älteren Türkisch vorgefunden habe und der gegenwärtig, soweit ich es feststellen konnte, nicht mehr gebräuchlich ist. Beim Studium des für die ältere türkische Sprache äusserst wichtigen türkisch-arabischen Wörterbuches کتاب دیوان

¹ Vgl. Armenische Lehnwörter im Türkischen, Handes Amsorya, Wien 1911, Nr. 5.

لغات الترك (*kitāb dīwān lughāt t-turk*), das ein gewisser Maḥmūd ibn Ḥusein ibn Muḥammed aus Kaschggar (*el-kāšgarī*) im Jahre 466 d. H. (beg. 6. IX. 1073 n. Ch.) verfasste und das sich als die älteste arabische Bearbeitung der türkischen Sprache und ihres Wortschatzes darstellt, stiess ich nämlich auf das Wort جنجرجا (Bd. III, S. 183), als dessen arabisches Aequivalent der Verfasser das arabisches *عصفور* „*usfur*“ „Sperling“ angibt. Wie dieses Wort aber auszusprechen ist, dafür gibt uns Maḥmūd keinen Anhaltspunkt, denn die Vokalisation des Wortes, die sonst der Verfasser bei allen Wörtern sorgfältig durchführt, fehlt hier. Wenn man aber die Buchstabengruppe جنجرجا, die mit Ausnahme des im Türkischen als Direktionsbuchstabe für *a* (*e*) verwendeten Schluss-Elifs nur aus Konsonanten besteht und *ğnğrga* lautet, näher betrachtet, so kann man sofort erkennen, daß sie mit dem armenischen Worte ԳՆՃՂՈՒԿ, das ebenfalls „Sperling“ bedeutet, fast identisch ist. Wir können daher mit vollem Rechte sagen, dass جنجرجا das armenische ԳՆՃՂՈՒԿ ist und *ğynğyrga* auszusprechen ist, wobei *y* den Lautwert des armenischen *ը* zu haben hätte¹. Für die Richtigkeit dieser Behauptung spricht sowohl das Vorhandensein eines anderen Ausdruckes für „Sperling“ für die Zeit, in der Maḥmūd sein Werk schrieb, nämlich سجا *sağa* (Bd. III, S. 165), als auch vor allem das Fehlen jeder Vokalisation des Wortes. Wäre das Wort ein türkisches und allgemein gebrauchtes, so hätte es Maḥmūd sicherlich wie alle anderen auch vokalisiert. Da es aber wahrscheinlich selten gebraucht wurde und obendrein wegen der Anlautskonsonanz auch noch schwer auszusprechen war, hat er die Aussprache nicht genau fixieren können. In den gegenwärtigen einschlägigen Wörterbüchern ist جنجرجا nicht zu finden. Jetzt heisst der Sperling im Osttürkischen (Čagataischen) جوچوق *ğupğuk* (wahrscheinlich ein onomatopoeisches Wort), im Kasan-Tatarischen جوچوک *čüpčük* (was das gleiche Wort ist),

¹ ԳՆՃՂՈՒԿ ist im Armenischen eigentlich ein Diminutivum von ԳՆՃՂ (Sperling), welche Form noch jetzt unter dem Volke z. B. in Erzerum, Khortortschur etc. gebraucht wird.